

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Վրաստանի միացման նշանակությունը անբողջ կովկասի համար. — Վենիսի, գոյքի ապահովություն և օրէնքի համահաւասար պաշտպանություն. — Համեմատություն կովկասի և նրա հարեան մահմեդական երկրների մէջ. — Ստորագ և եւրոպականաձև կուսակալ. — Վօրօնցօվի և Մեծ Նշխան Միքայէլի փոխարքայությունը. — Եւրոպական քաղաքակրթության նուաճած վայրեր կովկասում. — Մոռացուած անկիւններ իրանց բնակիչներով. — կովկասի յօբելեանական ջուլցահանդէսի ընտրոշ կողմը. — Գիւղատնտեսություն և զիւղացիական տնտեսություն. — Գիւղատնտեսություն սեփական աշխատանքով և տնտեսություն վարձուած բանուորներով. — Սիրիբիայում մասնատու անձանց արքունական հողեր տալու օրէնքը. — Положеніе объ успленной охранѣ. — Զեմստօնների հրատարակչական իրաւունքի սահմանափակումը. — Մատակարարութեան գործը և անբերրիությունը Ռուսաստանում:

Ամբողջ կովկասը տօնում է Ռուսաստանի միացման հարիւրամեակը: Մեր ընթերցողներին արդէն յայտնի է *) թէ ի՞նչ պատմական հանգամանքներում 1801 թուի սեպտեմբերի 12-ին հրատարակուեց Ալեքսանդր I-ի այն հրովարտակը, որով վերջնականապէս քայքայուած Վրաստանը ընդունուեց հզօր Ռուսաստանի թեի տակ: Կայսրի հրովարտակի մէջ նշանաւոր են մասնաւոր այն խօսքերը, որոնք քայքայուած են այդ պատմական անցքի նպատակը. «հիմնել Վրաստանում կառավարություն, որ կարողանայ հաստատել անձի, գոյքի ապահովություն և իւրաքանչիւրին տալ օրէնքի համահաւասար պաշտպանություն»:

Այդ խօսքերի մէջ ամփոփուած են այն հիմնական պայմանները, առանց որոնց չի կարող ոչ մի երկրում գոյություն ունենալ խաղաղ, կուլտուրական զարգացում: Այդ sine qua non պայմաններից զուրկ էր ոչ միայն Վրաստանը, այլ և նրա բախտակից Հայաստանը, ինչպէս և առհասարակ ասիական բունութեան մատնուած ամեն մի երկիր: Այդ պայմաններից զուրկ են դեռ ևս այսօր մեր հարեան Թուրքիան և Պարսկաս-

*) Փետրուարի №.

տանը և այդ է զլիաւոր պատճառը զրանց ժողովուրդների թշուառութեան և յետամնացութեան:

Այդ մահմեդական տէրութիւնները կենդանի պատկեր են մեր մօտիկ անցեալի: Այդ երկրներում այժմ էլ շարունակուում են այնպիսի կարգեր, որոնք սովորական էին մի հարիւր տարի առաջ և Անդրկովկասում, երբ խաղաղ աշխատանքով ապրող ժողովուրդը մատնուած էր ոչ միայն աւաղակաբարոյ ցեղերի մշտական արշաւանքներին, թշնամու սրի և կրակի արհաւիրքներին, այլ և սեփական մանր-մունր իշխանների և պաշտօնեաների անսահման կռամայականութեան: Երկրի մէջ գոյութիւն չուներ օրինաչափ, ուժեղ, կենտրոնական իշխանութիւն. վրաց թագաւորազնների և ֆեոդալների անվերջ երկպառակութիւններից օգտուում էին հարաւ-արեւմուտքից՝ Թիւրքիան, հարաւ-արեւելքից՝ Պարսկաստանը, հիւսիսից՝ Կովկասի լեռնականները: Թէ՛ վրաց իշխանները և թէ՛ հայ մելիքները չուներին կանոնաւոր սպառազինուած ու վարժուած զօրքեր, և թշնամու բանակների առաջ նրանք դուրս էին բերում վատ զինուած զւեղացիների և ճորտերի անկարգ խմբեր, որոնք անկարող էին ուժեղ ընդ-դիմադրութիւն ցոյց տալ շատ աւելի ստուար թշնամուն: Թէ՛ հայ և թէ՛ վրացի իշխանները չուներին այնքան քաղաքական հասունութիւն, որ միանային և դաշնակցութիւն կազմէին ընդհանուր թշնամու դէմ: Նեղ անձնական հաշիւներից դուրս դրանք ոչինչ չէին տեսնում, և մտաւորապէս այնքան ստոր էին, որ չէին կարող ընդունել օղզային միացնող գաղափարը: Դուրսի ընթացքում անվերջ կոտորածներից ազատ էր մնացել մի բուն հայ և վրացի ժողովուրդ, որ իր նուազ թուով ոչ մի ոյժ չէր ներկայացնում:

Այս բոլորից յետոյ դժուար չէ տեսնել որ Ռուսաստանի մուտքը Անդրկովկասում մի փրկութիւն էր մահմեդական բռնութեան ծովի մէջ խեղդուող այդ երկու բուն ժողովուրդների համար: Ահա ինչու Անդրկովկասի բուն աշխատող քրիստոնեայ ժողովուրդները անհուն բերկրանքով էին դիմաւորում ուս զօրքերին, և եթէ կային վրաստանի միացման հակառակօրդներ, զրանք զանազան խաներ էին և թաղաւորազներ և ոչ զրանց ճորտերը...

Վրաց իշխաններից և հայ մելիքներից շատերը դեռ մի քանի դար առաջ դիմումներ էին անում Ռուսաստանին և նրա պաշտպանութիւնը խնդրում: Սակայն մինչև որ Ռուսաստանի սահմանները չը հասան Կովկասեան լեռների վիթխարի պատնէշին՝ Ռուսաց յարերը առանձին նշանակութիւն չէին տալիս այդ դիմումներին: Անդրկովկասի միացումով

ռուսաց քաղաքականութիւնը սկսեց լուրջ զբաղուել միայն այն ժամանակ, երբ նա դէմ առ դէմ կանգնեց Կովկասեան լեռնականների հրոսակների առաջ: Այնուհետև ժամանակի խնդիր դառաւ Անդրկովկասին տիրելու հարցը, վրաց թագաւորի աղաչանքը միայն արագացրեց պատմական անխուսափելի անցքը: Մտնելով վրաստան, առանց մեծ արդեւքների Ռուսաստանը հասաւ Արաքսի ջրերին: Այժմ նրա ձեռքում էր Կովկասեան լեռնաշղթայի չորս կողմն էլ. մնում էր նուաճել և այդ անմատչելի բարձրութիւնների վրայ բուն զբաղած անկախ լեռնականներին, որոնք իրանց անընդհատ յարձակումներով և արշաւանքներով մշտական մի պատուհաս էին ամբողջ Կովկասեան Պարանոցի համար: Կռիւր երկարատև էր և աճեղ, անցած դարի աւելի քան կէսը գործ զրուեց նուաճելու համար այդ խիզախ լեռնականներին:

Ռուսաց բանակը չըջապատելով ահագին լեռնաշղթան, քայլ առ քայլ սեղմում էր իր պողպատե բաղուկներում կուսական լեռների աղառ որդիներին, մինչև որ 1855 թուի օգոստոսի 25-ին չընկաւ լեռնականների վերջին ընդդիմադրական կէտը—Շամիրի Գունիբը: Այնուհետև հեշտ էր սնչացնել և արևմտեան լեռնական յեղերի թույլ ընդդիմադրութիւնները: Եւ 1864 թուի մայիսի 21-ին, Մեծ Խլխան Միխայիլ Նիկոլայեւիչի փոխարքայութեան ժամանակ, ռուսաց բանակը վերջապէս կարողացաւ տօնել երկարատև կռիւների վախճանը: Խաղաղութիւնը ամբողջ Կովկասեան Պարանոցի վրայ հաստատուած էր և երկիրը կարող էր նուիրուել խաղաղ աշխատանքին և քաղաքացիական առաջադիմութեան: Ալեքսանդր I-ի վերելքերած խօսքերն այժմ կարող էին ամբողջապէս իրականանալ: Բախտի բերմամբ այդ կարևոր մօմենտներում Կովկասի վարչական ղեկը գտնուում էր ամսալիսի լուսաւոր, մարդասէր և աշխարհաշէն անձանց ձեռքում, ինչպէս էին նախ վօրօնյօվը և ապա Մեծ Խլխան Միխայիլ Նիկոլայեւիչը: Այդ երկու փոխարքայութիւնների ժամանակ սկսեց վերածնուել արեւելեան բռնակալութիւնների օրօք աւերուած և ամայացած երկիրը: Ազգաբնակչութիւնը աճեց, տնտեսական կեանքը կենդանացաւ, քաղաքացիական կարգեր ներմուծուեցին մշտական խռովութիւնների և արիւնհեղութիւնների երկրում: Դարեհի և Լանկթէմուրների ժամանակներից սկսած բռնակալ սատրապների և սարդարների անսանձ քմահաճօքներին վարժուած ասիայիները՝ սկսում էին նոր-նոր զաղափար կազմել երկրի իսկական կուսակալների մասին, ամեն օր կեանքի, գոյքի և պատուի համար

դողացող թշուառ վրացին և հայը վերջապէս հանգիստ չունչ քաշեցին եւրոպականաձե կառավարութեան ներքոյ:

Գաղափար կաղմելու համար թէ ինչ առաջադիմութիւն արու նոր կարգերի չնորհիւ կովկասը, մենք չը պէտք է նրան համեմատենք Արեւմտեան Եւրոպայի հետ, այլ՝ մեր հարեան թիւրքիայի և Պարսկաստանի, որովհետեւ մի հարիւր տարի առաջ մեր երկիրը այդ երկրների հարազատ կտորն էր: Եւ այժմ համեմատեցէք Անգլիոյ վրասի նախկին թիւրքական կամ նախկին մուսուլման նահանգները՝ դրանց կից երկրների հետ, որոնք պարսկական նահանգները՝ զրանց կից երկրների հետ, որոնք մնացին մահմեդական բռնակալութեան ներքոյ: Տարբերութիւնը անապին է: Այժմ էլ, ինչպէս և հարիւր տարի առաջ այդ երկրներում դեռ գոյութիւն չունեն անձի, գոյքի ապահովութիւն և օրէնքների համահաւասար պաշտպանութիւն: Քաղաքակրթութեան այդ հիմնական բարիքներից դուրկ են այդ երկրների ոչ միայն քրիստոնեաները—որոնց մահմեդական ֆանատիկոսութիւնը լիակատար մարգիկ չէ համարում, այլ միայն մարդկային հօտ—այլև Մահմեդի հարազատ ժողովուրդը, մուսուլման մասսան: Այդ է դաժան իրականութիւնը, և ինչո՞ւ զարմանալ որ այդ երկրների քրիստոնեայ ժողովուրդները ձգտում են Ռուսաստանին: Մասսան բէալիստ է. նա չի սիրում վերացական դատողութիւններ, նա տեսնում է իր թշուառ երկրի սահմանի միւս կողմում մի բարեկարգ կացութիւն, որ իր համար մի տեսչ, մի ցնորք է թուում. նա տեսնում է այնտեղ իր եղբայրների խաղաղ կեանքը, բայց ինքն իր սեփական ոյժերով յոյս չունի ձեռք բերել գոյութեան այդպիսի պայմաններ, ուստի դաղթում է իր եգիպտական գերութիւնից դէպի այդ աւետեայ երկիրը: Այս կէտը պէտք է ի նկատի ունենալ, հասկանալու համար բուն ժողովրդի հոգեբանութիւնը, որ տարբեր է ինտելիգենցիայի վերացական դատողութիւններից:

Անշուշտ կովկասում հասարակական կեանքը իր շատ կողմերով դեռ շատ հեռու է ոչ միայն եւրոպականից, այլ նոյն իսկ չունի կենտրոնական Ռուսաստանի քաղաքացիական շատ բարիքներ (երգուեալ դատաւորներ, բարձրագոյն դպրոց, զեմստովօ կայն), սակայն, ինչպէս ասացինք մի քիչ առաջ, պէտք է համեմատութեան համար վերցնել հարեան ափական երկիրները: Ամենաթուրքիկ համեմատութիւնը անգամ այն ժամանակ ակնյայտնի կը դարձնի, որ կովկասը այժմ գտնւում է եւրոպական քաղաքակրթութեան չաւղի վրայ, և քանի գնում աւելի է հեռանում իր նախկին բախտակից ափական երկրներէ: Այդ էվօլուցիայի մէջ բնականաբար նախ մեծ ու պստիկ քաղաքները, ապա կանոնաւոր ճանապարհներով մեծ

քաղաքների հետ կապած վայրերն են փոխում հին կեանքը և ընդունում եւրոպական քաղաքակրթութիւնը, իր թէ լուսաւոր և թէ խաւար կողմերով: Եւ որովհետեւ մեր երկրում դեռ շատ անկրկններ կան, որոնք նախաջրհեղեղեան հաղորդակցութեան մէջ են դրսի աշխարհի հետ, ուստի հին, նահապետական կեանքը դեռ պահպանում է անփոփոխ շատ մոռացուած անկրկներում, որոնք, ինչ ասել կ'ուզէ, գիւղացիներով են բնակուած... Այս վերջինների թուի մասին գաղափար է տալիս 1897 թուի յունուարի 28-ին կատարուած ժողովրդագրութիւնը, որից երևում էր որ երկու սեռի 9,248,695 հոգուց միայն 996,248 հոգի են ապրում քաղաքներում: Այդպէս ուրեմն ազգաբնակչութեան գիւղական մասը շարունակում է իր թուով գերիշխող լինել մեր երկրում: Այդ ի նկատի ունենալով և ապա դառնալով Կովկասի յօրեկանական յուլյանդէսին, որ պէտք է ցոյց տայ մեր առաջադիմութիւնը այս հարիւր տարուայ ընթացքում:

Այդ յուլյանդէսի հետ մեր ընթերցողները կը ծանօթանան առանձին յօդուածներում, այժմ մենք միայն ուզում ենք մասնանշել անել նրա մի բնորոշ կողմը: Մենք վերեւ ասացինք, որ եւրոպական կեանքի հոսանքը շօշափելի արդիւնք տուել է միայն քաղաքներում և կանոնաւոր հաղորդակցութեան ճանապարհների վրայ: Ցուցահանդէսը ապացուցանում է այդ միտքը: Դուք այդտեղ տեսնում էք կապիտալիստական արդիւնագործութեան, բուրժուական կօմֆօրտի, դպրոցական հաստատութիւնների պատրաստած բազմաթիւ իրեր, տեսնում էք նաև քաղաքային արհեստաւորների և տնայնագործների ձեռագործներ, սակայն գիւղացիների տնտեսութիւնը միանգամայն բացակայում է: Անշուշտ գիւղատնտեսական արդիւնքներ ի ցոյց են դրուած, բայց դրանք կապիտալիստական, խոշոր կամ վարձով աշխատանքի վրայ հիմնուած, կալուածատիրական տնտեսութեան արտադրութիւններ են և ոչ գիւղացու սեփական աշխատանքով, իր մի կտոր հողից ստացած արդիւնքներ: Գիւղատնտեսութիւնը, իբրև կապիտալիստական արդիւնագործութիւն, ներկայացրած է, իսկ գիւղացու տնտեսութիւնը— ոչ: Եւ դա հասկանալի է. եթէ գործարանատէրը, կալուածատէրը, քաղաքացի արհեստաւորը ինքնաբերաբար մասնակցելու թէ միջոց ունեն և թէ օգուտ, նոյնը չի կարելի ասել գիւղացու մասին. ուստի յուլյանդէսի կարգադրիչների ամենամեծ ջանքերը և հոգատարութիւնը պէտք է ուղղուած լինէին՝ դրանց ոչ միայն մասնակից անելու համակովկասեան յօրեկանական յուլյանդէսին, այլ և ներկայա-

ցնել ցուցահանդէսում մեր գիւղացիներին իրանց ամբողջ նիստ ու կացով: Յուցահանդէսը ամենալաւ առիթ էր հասարակութեան ուշադրութեան ներկայացնել ազգաբնակչութեան այդ ահագին մեծամասնութեան թշուառ դրութիւնը, նրա հողային, ու հարկային պայմանների պատկերը, նրա մտաւոր, առողջապահական վիճակը, նրա գործիքները, նրա տնտեսութիւնը եայցն: Եւրոպական ցուցահանդէսներում դուք կը տեսնէք տիպիկական գիւղական խրճիթներ իրանց բնակիչներով, նիստ ու կացով, գործիքներով, տնային անասուններով, և, բացի այդ, բազմաթիւ ցուցակներ, քարտէշներ, դիագրամներ, որոնք լիակատար կերպով ծանօթացնում են գիւղացիների դրութեան հետ ընդհանրապէս: Եւ մեզ թւում է որ եթէ մեր կարգադրիչ պարոնները կամ Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի քիչ աւելի եռանդ և սրտագին վերաբերմունք ցոյց տային գէպի մեր գիւղացիները—դժուար չէր լինի ցուցահանդէսում շինական տնտեսութեան համար էլ այնպիսի բազմակողմանի լուսարանութիւն ստեղծել, ինչպէս այդ արեւ է Բագուի նաւթագործների ժողովի Խորհուրդը իր ճիւղի վերաբերեալ: Սակայն... «Ժողովուրդ» խօսքը մեր բարեկեցիկ բուրժուանների և բիւրօկրատների համար միայն մի դատարկ հնչիւն է, և, շատ-շատ, լոկ պլատոնական զգացմունքներ է կարողանում զարթեցնել... Այդպիսով յօրելեանական ցուցահանդէսը միջոց չի տալիս իմանալ թէ ինչ աստճադիմութիւն է արեւ Կովկասի ազգաբնակչութեան գիւղական մասը, ինչ դրութեան մէջ է մեր կրկրում ոչ-խոշոր կամ վարձու աշխատանքի վրայ հիմնուած տընտեսութիւնը, որ ներկայացրած է, այլ՝ մանր, գիւղացիական տնտեսութիւնը, որ հիմնուած է մանր հողատերի սեփական աշխատանքի վրայ: Մեր հայեացքը այդ հարցի վրայ յայտնի է (Մարտ) արդէն. մենք կողմնակից ենք այն սկզբունքին, որ հողը պատկանի նրան մշակողին և ոչ սպեկուլեանտներին կամ զանազան խաներին, բէգերին եայլն: Այդ տեսակէտով ցանկալի էինք համարում, որ մեր երկրում ևս ստեղծուէին դիւրութիւններ, որ հողերը անցնէին գիւղացիների ձեռքը, ինչպէս այդ անուամ է կենտրոնական Ռուսաստանում:

Այդ տեսակէտից ուշադրութեան արժանի է մի նոր կարգադրութիւն, որ Բարձրագոյն հաստատուած է յուլիսի 8-ին: Մեր խօսքը մասնաւոր անձանց Սիբիրում աբուսակաւ հողեր տալու օրէնքի մասին է:

Նոր օրէնքով թոյլատրւում է Սիբիրի որոշ նահանգներում ծախել արքունական հողերը մասնաւոր անձանց, որպէս զի այդտեղ կազմուեն խոշոր (3 հազար զեսեատին) մասնաւոր

տնտեսութիւններ, Ռուս ազնուականներին շատ ձեռնառու պայմաններով երկարատև (մինչև 99 տարի) ժամանակով տրուելու են հողեր նաև կապալով, Կապալառուն կարող է ապագայում իր մշակուած հողերի սեփականատէրը դառնալ, Այլպիսով անշուշտ պակասում են այն հողերը, որոնք ռուս գիւղացի գաղթականների պէտքերի համար էին պահուած: Ինչպէս փորձը ցոյց է տուել, մասնաւոր կալուածատէրերը, կենտրոնական Ռուսաստանում, ոչ մի տեղ կանոնաւոր տնտեսութիւններ չեն կարողացել հիմնել և, մեծ մասամբ, իրանց հողերը կամ վաճառել են սպեկուլեանտներին կամ թանգ գներով ծախել են ու կապալով տուել գիւղացիներին: Ապագան ի հարկէ կը ցոյց տայ թէ ազնուականութիւնը արդեօք կարող կը լինի Սիբիրիայում այլ կերպ վարուել, քան կենտրոնական Ռուսաստանում:

Այժմ թուե՛ք մի քանի նշանաւոր կարգադրութիւններ ևս: Յայտարարուած է յունիսի 29-ին Բարձրագոյն հաստատուած միւնիստրների կօմիտէտի որոշումը. 1) Ս. Պետերբուրգի, Մոսկուայի, Խարկովի, Եկատերինօսլավի, Կիեւի, Պոդօլի, Վօլընի նահանգներում, Բոստով, Տագանրոգ, Նախիջևան քաղաքներում, Կաստրովկա գիւղում, Խերսօնեան նահանգի Բօգօեակլենսկ, Կալինովկա և Վարվարովկա գիւղաքաղաքներում, ինչպէս և Պետերբուրգի, Օդեսայի և Նիկօլաեվսկի քաղաքապետութիւններում և Կրօնշտատի զինուորական նահանգապետի կառավարութեան ենթակայ տեղերում, շարունակել 1901 թ. սեպտեմբերի 4-ից ևս մի տարի ժամանակով զօրեղացրած պահպանութեան կանոնադրութիւնը (положение объ усиленнѣй охранѣ): 2) Նոյն ժամանակամիջոցով զօրեղացրած պահպանութեան դրութեան մէջ է յայտարարուած նաև Թիֆլիս քաղաքը և Բագուն իր գաւառով, Պօկրովսկեան և Շույսկեան գաւառները, Վլադիմիրեան նահանգում Իվանօփօ-Վօզնեսենսկ քաղաքը, Նիզովնոգորաշ քաղաքը և Խերսօնեան նահանգում Վօսկրեսենսկ արուարձանը և Կրիվոյ Բօգ վայրը:

Յունիսի 21-ին հրատարակուած է ներքին գործերի միւնիստրի չրջաբերականը, որով սահմանափակում է զեմսովօնների հրատարակչական իրաւունքը. թոյլատրում է բացի զեմսովօյի գործունէութեան վերաբերեալ մասնագիտական կամ պարբերական հրատարակութիւններից նաև հրատարակել ժողովրդական ընթերցանութեան միայն այնպիսի գրքեր, որոնք մտած են ժողովրդական գրագրարանների, ընթերցարանների և գլրոցների ցուցակներում:

Մի տարի առաջ, 1900 թուի յունիսի 12-ին հրատարա-

կած օրէնքով, հացահատիկների շտեմարանների կամ մատակարարութեան գործը (продовольственное дело) նոյնպէս խլուած էր զեմստվոյի ձեռքից և յանձնուած վարչութեան, վարչութիւնը դեռ չէր կարողացել նոր օրէնքի համեմատ կազմակերպել մատակարարութեան գործը, որ վրայ հասաւ նոր անբերրիութիւն 12 նահանգներում, որոնք կազմում են Եւրոպական Ռուսաստանի տարածութեան քառորդ մասը: Ինչպէս երևում է ներքին գործերի մինիստրի օգոստոսի 17-ին յայտարարած շըրջաբերականից, մատակարարական գործի նոր կազմակերպութիւնը 1900 թուի յունիսի 12-ի օրէնքով բաւարար չէ, ուստի Բարձրագոյն խնդրում է մի քանի էական յաւելումներ, որոնցով դարձեալ կարեւոր է համարւում զեմստվոյի որոշ մասնակցութիւնը ժողովրդական պատուհասի դէմ մաքառելու վեհ աշխատանքի մէջ:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ